ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար շինարարական աշխատանքների կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողության իրականացման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/11» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի նոյեմբերի 12-ին կնքված N ԴԴ-ԳՀԱՇՁԲ-19/11-2 պայմանագրում 2019 թվականի դեկտեմբերի 13-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունները պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման համար հատկացվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն՝

Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ը հաստատվել է նոր խմբագրությամբ, համաձայնագրով նախատեսվել է դրույթ հետևյալ բովանդակությամբ. «Սույն համաձայնագրի և Պայմանագրի պայմանները կիրառվում են Պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում, Պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը Կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումն իրականացվում է սույն համաձայնագիրը, ինչպես նաև Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում»:

Փոփոխության հիմնավորում՝

<u>Պայմանագրի 7.5, 7.13 կետեր:</u>

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

12.11.2019թ. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՈՐԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/11-2» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «13» դեկտեմբերի 2019թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Վահրամ Կնյազյան Ա/Ձ-ն (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները, և հիմք ընդունելով 12.11.2019թ. կնքված N «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/11-2» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով ֆինանսական միջոցների առկայությունը, Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման անհրաժեշտությունը՝ Կողմերը որոշեցին Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ» վերտառությամբ Հավելված N 2-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի և Պայմանագրի պայմանները կիրառվում են Պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում, Պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը Կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումն իրականացվում է սույն համաձայնագիրը, ինչպես նաև Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2.3. Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է N 1 համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Դատական դեպարտամենտ	***Վահրամ Կնյազյան Ա/Ձ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5	Հասցե՝ Շիրակի մարզ, ք. Արթիկ, Բաղրամյան 1, բն. 2
Հ/Հ՝ 900011192151	Հ/Հ՝ 16067009230500
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 61718934
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ, 10 մ/հ
Ղեկավար՝ Կ. Փոլադյան	Վահրամ Կնյազյան Ա/Ձ
---------- (ստորագրություն) Կ.Տ	---------- (ստորագրություն) Կ.Տ

Հավելված N 1

« 13 » դեկտեմբերի 2019 թ. կնքված N 1 համաձայնագրի

(Հավելված N 2
« 12 » նոյեմբերի 2019 թ. կնքված
N «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/11-2» ծածկագրով պայմանագրի)

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության				
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին ըստ ամիսների, այդ թվում	
			դեկտեմբեր	Ընդամենը
2	71351540/503	Տեխնիկական հսկողության ծառայություններ	97 000	**97 000**
3	71351540/505	Տեխնիկական հսկողության ծառայություններ	57 000	**57 000**
4	71351540/506	Տեխնիկական հսկողության ծառայություններ	107 000	**107 000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5

Հ/Հ՝ 900011192151
ՀՎՀՀ՝ 02583241
գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
Վահրամ Կնյազյան Ա/Ձ
Հասցե՝ Շիրակի մարզ, ք. Արթիկ, Բաղրամյան 1, բն. 2
Հ/Հ՝ 16067009230500
ՀՎՀՀ՝ 61718934
«ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ, 10 մ/հ

Վահրամ Կնյազյան Ա/Ձ

(ստորագրություն)
Կ.Տ